

ԿԱՆԹԵՂ

ՄՈՆՏՐԵԱԼԻ ՍՈՒՐԵ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՐՈՒԿ

GANTEGH

BULLETIN DU DIMANCHE
DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE
ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL



GANTEGH

SUNDAY BULLETIN OF
ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

WWW.SAINTGREGORY.CA

ԿԻՐԱԿԻ, 10 ՅՈՒՆԻՍ 2018

**Գ Կիր. Չկնի Հոգեգալստեան
/ ԹԻԻ 62**

SUNDAY, June 10, 2018

3rd Sunday After Pentecost

/ NO. 62

Today's Bible Readings:

Matthew 12: 1-8 / Romans 6:12-23 |



Պատարագիչ՝

ԱՐԺ. Տ. ՀԱՅԱՐԻ ԲՅՆՅ. ԹԱՆԱՇԵԱՆ

Celebrant:

REV. FR. HAYARI TANASHIAN

Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan,

Dn. Vahan Shakaryan,

Dn. Raffi Arabian, Dn. Norayr Grigoryan

Acolytes: Michael Arabian, Armen Bajakian, Shiraz Sivadjian

Choirmaster: Mr. Sarkis Barsemian


Organist: Mr. Karen Manucharyan

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

secretary@saintgregory.ca | www.saintgregory.ca

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

ՄԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 12:1-8

1 Այդ ատեն Յիսուս՝ Շաբաթ օր մը՝ գնաց արտերու մէջէն. իր աշակերտները՝ անօթենալով՝ սկսան ցորենի հասկեր փրցնել եւ ուտել: **2** Երբ Փարիսեցիները տեսան՝ ըսին անոր. «Ահա՛ քու աշակերտներդ կը գործեն, մինչդեռ արտօնուած չէ գործել Շաբաթ օրը»: **3** Ան ալ ըսաւ անոնց. «Չէ՛ք կարդացեր Դաւիթի ըրածը, երբ ինք եւ իրեն հետ եղողները անօթեցան. **4** մտաւ Աստուծոյ տունը, ու կերաւ առաջադրութեան հացերը, որ ո՛չ իրեն արտօնուած էր ուտել, ո՛չ ալ իրեն հետ եղողներուն, բայց միայն քահանաներուն: **5** Կամ թէ Օրէնքին մէջ չէ՛ք կարդացեր թէ քահանաները կը սրբապղծեն Շաբաթը տաճարին մէջ՝ Շաբաթ օրերը, եւ անպարտ են: **6** Բայց կը յայտարարեմ ձեզի թէ այստեղ տաճարէ՛ն աւելի մեծ մէկը կայ: **7** Եթէ գիտնայիք թէ ի՛նչ ըսել է. “Կարեկցութի՛ւն կ’ուզեմ, ու ո՛չ թէ զոհ”, այն ատեն չէիք դատապարտեր անպարտները. **8** որովհետեւ մարդու Որդին տէրն է Շաբաթին»

ՀՈՈՍԷԱՑԻՆԵՐՈՒՆ 6:12-23

6 Սա՛ գիտնանք՝ թէ մեր հին մարդը խաչուեցաւ անոր հետ, որ մեղքի մարմինը ոչնչանայ, որպէսզի այլեւս մեղքին ստրուկը չըլլանք: **7** Որովհետեւ ա՛ն որ մեռած է մեղքին, արդարացած է մեղքէն: **8** Ուրեմն եթէ մենք մեռանք Քրիստոսի հետ, կը հաւատանք թէ պիտի ապրինք ալ անոր հետ: **9** Քանի որ գիտենք թէ Քրիստոս մեռելներէն յարութիւն առած ըլլալով՝ այլեւս չի մեռնիր. ա՛լ մահը չի տիրեր անոր վրայ: **10** Որովհետեւ երբ ան մեռաւ, մեղքի՛ համար մեռաւ՝ մէկ անգամ ընդմիշտ, եւ հիմա որ կ’ապրի՝ Աստուծո՛յ համար կ’ապրի: **11** Նոյնպէս դուք ձեզ մեռած սեպեցէք մեղքին, բայց ողջ՝ Աստուծոյ, մեր Տէրոջ՝ Քրիստոս Յիսուսի միջոցով: **12** Ուրեմն ա՛լ մեղքը թող չթագաւորէ ձեր մահկանացու մարմինին վրայ, որ հնազանդիք անոր ցանկութիւններուն. **13** ու ձեր մարմինին անդամները մի՛ յանձնէք մեղքին՝ անիրաւութեան գործիք ըլլալու: Հապա դուք ձեզ ընծայեցէք Աստուծոյ՝ որպէս մեռելներէն վերապրողներ, եւ ձեր անդամները ընծայեցէք Աստուծոյ՝ իբր արդարութեան գործիքներ: **14** Արդարեւ մեղքը պիտի չիշխէ ձեր վրայ. որովհետեւ ո՛չ թէ Օրէնքի տակ էք, հապա՝ շնորհքի տակ: **15** Ուրեմն ի՛նչ. մեղանչե՛նք,

քանի որ Օրէնքի տակ չենք, հապա՛ շնորհքի տակ: Ամենեւին: **16** Չէ՛ք գիտեր թէ որո՛ւն որ դուք ձեզ իբր ստրուկ յանձնէք՝ հնազանդելու համար, ստրուկ կ'ըլլաք անոր՝ որուն կը հնազանդիք, թէ՛ մեղքին՝ որ կ'առաջնորդէ մահուան, եւ թէ հնազանդութեան՝ որ կ'առաջնորդէ արդարութեան: **17** Բայց շնորհակալութի՛ն Աստուծոյ, որ մեղքին ստրուկ ըլլալէ ետք՝ սրտանց հնազանդեցաք այն ուսուցումի տիպարին՝ որ աւանդուեցաւ ձեզի: **18** Ուստի դուք՝ ազատած ըլլալով մեղքէն՝ ստրուկ եղաք արդարութեան. **19** (մարդկային կերպով կը խօսիմ՝ ձեր մարմինին տկարութեան պատճառով.) քանի որ ինչպէս յանձնեցիք ձեր անդամները անօրէնութեան՝ ստրուկ ըլլալու անմաքրութեան եւ անօրէնութեան, այնպէս ալ հիմա ընծայեցէ՛ք ձեր անդամները սրբութեան՝ ստրուկ ըլլալու արդարութեան: **20** Որովհետեւ երբ դուք ստրուկ էիք մեղքին՝ ազատ էիք արդարութենէն: **21** Ուրեմն այն ատեն ի՞նչ պտուղ ունէիք այն բաներէն՝ որոնց համար հիմա կ'ամչնաք. որովհետեւ անոնց վախճանը մահ է: **22** Իսկ հիմա, մեղքէն ազատած եւ Աստուծոյ ստրուկ եղած ըլլալով, ձեր պտուղը ունիք՝ սրբութեամբ, ու վախճանը՝ յաւիտենական կեանքը: **23** Որովհետեւ մեղքին վարձատրութիւնը մահ է, բայց Աստուծոյ շնորհը՝ յաւիտենական կեանք է, Յիսուս Քրիստոսի՝ մեր Տէրոջ միջոցով:

Matthew 12:1-8

1At that time Jesus went on the sabbath day through the corn; and his disciples were an hungred, and began to pluck the ears of corn and to eat. **2**But when the Pharisees saw it, they said unto him, Behold, thy disciples do that which is not lawful to do upon the sabbath day. **3**But he said unto them, have ye not read what David did, when he was an hungred, and they that were with him; **4**How he entered into the house of God, and did eat the shewbread, which was not lawful for him to eat, neither for them which were with him, but only for the priests? **5**Or have ye not read in the law, how that on the sabbath days the priests in the temple profane the sabbath, and are blameless? **6**But I say unto you, that in this place is one greater than the temple. **7**But if ye had known what this meant, I will have mercy, and not sacrifice, ye would not have condemned the guiltless. **8**For the Son of man is Lord even of the sabbath day¹²Let not sin therefore reign in your mortal body, that ye should obey it in the lusts there of.

Romans 6:12-23

¹² Let not sin therefore reign in your mortal body, that ye should obey it in the lusts thereof ¹³ Neither yield ye your members as instruments of unrighteousness unto sin: but yield yourselves unto God, as those that are alive from the dead, and your members as instruments of righteousness unto God. ¹⁴ For sin shall not have dominion over you: for ye are not under the law, but under grace. ¹⁵ What then? shall we sin, because we are not under the law, but under grace? God forbid. ¹⁶ Know ye not, that to whom ye yield yourselves servants to obey, his servants ye are to whom ye obey; whether of sin unto death, or of obedience unto righteousness? ¹⁷ But God be thanked, that ye were the servants of sin, but ye have obeyed from the heart that form of doctrine which was delivered you. ¹⁸ Being then made free from sin, ye became the servants of righteousness. ¹⁹ I speak after the manner of men because of the infirmity of your flesh: for as ye have yielded your members servants to uncleanness and to iniquity unto iniquity; even so now yield your members servants to righteousness unto holiness. ²⁰ For when ye were the servants of sin, ye were free from righteousness. ²¹ What fruit had ye then in those things whereof ye are now ashamed? for the end of those things is death. ²² But now being made free from sin, and become servants to God, ye have your fruit unto holiness, and the end everlasting life. ²³ For the wages of sin is death; but the gift of God is eternal life through Jesus Christ our Lord.




ՏՕՆԵՐ

07 Յունիս 2018

Ս. Իսահակ եւ Ս. Յովսէփ Իշխաններու, Ս. Սարգիս եւ Ս. Բագոս Վկաներու Յիշատակութեան Օր

Իսահակը եւ Յովսէփը հագարացի իշխան Կայսրի զաւակներն էին: Կայսրը Կարինի մէջ ամուսնացած էր Քրիստոնեայ Յայ կնոջ հետ՝ արտօնելով անոր պահպանել Քրիստոնէական հաւատքը եւ նոյն հաւատքով դաստիարակել զաւակներուն: Սակայն, տարիներ ետք, յայտնի կը դառնայ իշխանագուն երկու եղբայրներուն Քրիստոնեայ ըլլալը, եւ անոնց իբրեւ Իսլամ հօր զաւակներ կը ստիպեն նոյն կրօնը ընդունիլ: Չնայած հօր՝ կեղծ ուրացութեան յորդորներուն, եղբայրները անդորդուելի կը մնան իրենց հաւատքին մէջ եւ կը գլխատուին 808 թուականին:



Յռոմէացի ազնուականներ Սարգիսը եւ Բագոսը Բիւզանդական արքունիքի բարձրաստիճան պաշտօնեաներ էին, որոնք կռապաշտական արարողութեան մը մասնակցելէ հրաժարելուն պատճառով կ'ենթարկուին բազմաթիւ տանջանքներու, սակայն հաւատարիմ կը մնան Քրիստոնէութեան: Տանջանքներէն Բագոսը մահացած է, իսկ Սարգիսը նետուած է բանտ եւ գլխատուած Յիւսիսային Սուրիոյ մէջ 300 թուականին: Յայ Առաքելական եկեղեցին սուրբերու օրը կը նշէ Յոգեգալստեան տօնէն յետոյ երրորդ շաբաթուան Յինգշաբթի օրը՝ նահատակներու վարքով Քրիստոնեայ հաւատացեալներուն յորդորելով հաւատարիմ մնալ Քրիստոնէական կրօնին՝ ո՛չ միայն այս, այլ նաեւ՝ հանդերձեալ աշխարհին մէջ աստուածային պարգեւի արժանանալու համար:



09 Յունիս 2018

**Ս. Ներսէս Մեծ Զայրապետի եւ Խատ
Եպիսկոպոսի Յիշատակութեան Օր**

Յայ բազմաշնորհ կաթողիկոսներէն է Ս. Ներսէս Զայրապետը (353-373թթ.), որուն իրաւամբ տրուած է Մեծ անունը: Ըստ պատմական աղբիւրներու՝ ան Ս. Գրիգոր Լուսաւորիչի տոհմէն է, Յուսիկ Զայրապետի թոռը: Փառէն կաթողիկոսի մահէն ետք, Զայոց Արշակ թագաւորի սենեկապան Ներսէսը, թերեւս աշխարհական, կը նկատուի կաթողիկոսական գահի ամենայ արժանի թեկնածուն եւ արքայի պարտադրմամբ կը ձեռնադրուի կաթողիկոս: Յետագային հայրապետական աթոռի գահակալը կը դառնայ Յայ Առաքելական Եկեղեցւոյ առաջին մեծ բարեփոխիչը եւ իր ժողովուրդի մեծանուն բարերարը: Անոր նախաձեռնութեամբ գումարուած Աշտիշատի ազգային-եկեղեցական ժողովին (354 թ.) առաջին անգամ կ'ընդունուին որոշումներ, որոնք կը կանոնակարգեն հոգեւոր-եկեղեցական կեանքը, կը սահմանեն ընտանիքի բարոյական սկզբունքները: Ներսէս Մեծ Զայրապետի նախաձեռնութեամբ կը հիմնուին վանքեր ու դպրոցներ, բոլոր անտուններու ու աղքատներու համար կը կառուցուին ապաստաններ ու հիւանդանոցներ: Զայրապետն իր ժողովուրդի կողքին եղած է միշտ եւ ամենուր: Ձիրաւի ճակատամարտի յաղթանակը ձեռք բերուած է նաեւ՝ Ս. Ներսէս Զայրապետի շնորհիւ, որ ան ողջ ճակատամարտի ընթացքին մօտակայ լեռան վրայ բազկատարած աղօթած է Զայոց բանակի յաղթութեան համար: Ազգաշէն ու եկեղեցաշէն այս գործունեութեան համար ալ Ս. Ներսէս Զայրապետին կոչած են նաեւ՝ «Լուսաւորիչ սրտից»: Զայրապետի բոլոր այս ձեռնարկներուն աջակից ու գործակից եղած է Խադ Եպիսկոպոսը, որուն պատմիչ Փավստոս Բիւզանդը կոչած է նաեւ՝ Ներսէս Զայրապետի աթոռակից: Զայ Առաքելական Եկեղեցին սուրբերու շարքը դասելով իր երկու նուիրեալ զաւակներուն՝ անոնց յիշատակը միասնաբար կը տօնէ Կաթողիկէ Սուրբ Էջմիածնի տօնին յաջորդող Շաբաթ օրը:



10 Յունիս 2018

Բարեկենդան Սուրբ Գրիգոր Լուսավորիչի Պահոց

Բարեկենդանը պահքին նախորդող Կիրակին է: Այս դեպքին բարեկենդանը նուիրուած է Ս. Գրիգոր Լուսավորիչի մասունքները գտնելու գիտին: Ս. Գրիգոր Լուսավորիչի մասունքները կը համարուին բոլոր Քրիստոնէական եկեղեցիներու ամենամեծ սրբութիւններէն մէկը: Տօնին առիթով եկեղեցին հաստատած է շաբաթական պահք՝ Երկուշաբթին մինչեւ Շաբաթ:



Holidays

2018-06-09

Commemoration of St. Nersess the Great and St. Bishop Khad



St. Nersess the Great, Catholicos of All Armenians (353-373) is one of the most prominent Armenian Pontiffs. According to historical sources he is from the family and lineage of St. Gregory the Illuminator, and grandson of the Armenian Patriarch Houssik. Following the death of Catholicos Paren I (of Ashtishat), Nersess is a chamberlain (chief attendant or steward) for the Armenian King Arshak. Although a layman at the time, he is found to be the most deserving candidate for the throne of the Catholicos, and under the compulsion of the King is ordained as a priest,

and consecrated as Catholicos. The Armenian Pontiff becomes the first great reformer of the Church and a renowned benefactor of his nation. Upon Nersess' initiative, a National Ecclesiastical Council is convened in Ashtishat in 354. Upon his initiative, decisions are made which are intended to regulate and bring order to the spiritual-ecclesiastical life, based upon the defined moral principles of the family. Nersess the Great



establishes numerous monasteries and schools. He builds hospices, residences and hospitals for the ill, homeless and the poor. The Catholicos was always with his flock. The Armenian people won the battle of Dzirav due to St. Nersess' unceasing prayers for victory on a nearby mountaintop, as the war was being waged on the field below.


For his devout activity Nersess the Great is also called the "Illuminator of Hearts".

Bishop Khad was a supporter of Nersess the Great, and was instrumental in the implementation of the Catholicos' initiatives and undertakings. Historian Pavstos Buzand identifies Bishop Khad as the coadjutor of the Armenian Pontiff, St. Nersess the Great.

2018-06-10

Eve of the Fast of St. Gregory the Illuminator

This is the Sunday preceding the week prior to the feast of Discovery of St. Gregory the Illuminator's relic, in the 5th century, lasting from Monday to Friday.





Եկեղեցւոյ Տաղաւար Տօներ եւ Յառաջիկայ Ձեռնարկներու

Պայծառակերպութիւն Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի
Վարդապետ – Ուխտագնացութիւն Դէպի Ռիկօ
Կիրակի, 15 Յուլիս 2018

Վերափոխումն Ս. Աստուածածնի –

Խաղողօրհնէք – Կիրակի, 12 Օգոստոս 2018

Խաչվերաց – Կիրակի, 16 Սեպտեմբեր 2017

Տարեկան Պազար – Շաբաթ եւ Կիրակի – Հոկտեմբեր 27 եւ 28, 2018

Սանուկներու Ս. Ծնունդ / CFFA – Կիրակի, 2 Դեկտեմբեր 2018

Եկեղեցւոյ Գնման եւ Օծման 48-րդ Տարեդարձ –

Կիրակի, 9 Դեկտեմբեր 2018

FEAST DAYS AND UPCOMING EVENTS

Feast of the Transfiguration of our Lord - Pilgrimage to Rigaud
Vartavar - Sunday, July 15th

Feast of the Assumption of the Holy Mother of God -
Sunday, August 12th, 2018

Feast of the Exaltation of the Holy Cross –
Sunday, Sept. 16th, 2018

Annual Bazaar – Saturday & Sunday -
October 27 & 28, 2018

Children's Christmas /CFFA –
Sunday, December 2nd, 2018

Church 48th Anniversary –
Sunday, December 9th, 2018



**Ուշադրութիւն
մեր սիրելի
հաւատացեալներուն**



**Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի
կամ e-mail-ի փոփոխութիւն, հաճեցէք ձեր նոր տուեալները
փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան (514) 279-3066, մեր
հաղորդակցութիւնները կարենալ պահելու համար
կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ:
Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:**

Ճիսական Խորհուրդ

Attention to our beloved parishioners,

**If you have changes in your address, e-mail or phone numbers
please feel free to convey your new data to the Church office at
(514) 279-3066, to maintain our communication in a regular,
continuous, and up-to-date course.**

Thank you for your cooperation.

Parish Council

ՆՈՒԻՐԱՏՈՒՌԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

***Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal
Donations of June 2018
have been received with great appreciation***



**IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:
THE LATE SONA GIRAGOSYAN DEMIRJIAN**

**Ms Maral Parseghian \$100
Mr. & Mrs. Jack Baronian \$50**


**CHURCH NAME DAY
MADAGH:**

Mrs. Magda Zakarian, Mr. & Mrs. Asbed & Mirna Bajakian, Mr. Ara Gerikyan, Mr. & Mrs. Antranik & Armine Sirinyan, Mrs. Mayranus Ozoglu \$50, Mrs. Marguerite Kazarian \$40, Mrs. Rachel Doramajian \$30, Mr. & Mrs. Onnik & Marie Pilafian \$25, Mr. & Mrs. Berdj Essen, Mrs. Lida Altounian, Mr. Karen Manucharyan, Mr. Sarkis Koushagjian, Mr. Sarkis Barsemian, Mr. Varoujan Margossian, Dr. Arto Demirjian, Mr. Edouard Husseindjian, Mr. Minas Asaduryan, Mrs. Mania Keshishian, Mrs. Vartouhie Balian \$20, Mr. Haroutiun Ballian \$15



ՀՈԳԵՀԱՆԳԱՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL

ԿԻՐԱԿԻ, 10 Յունիս 2018



Տիկ. Չարուհի Էլակեօզի,
Պրն. Վահրամ Էլակեօզի,
Տ. եւ Տիկ. Արամ եւ Անի Էլակեօզի եւ զաւակներուն՝
Լօռիի եւ Մարալի,
Տ. եւ Տիկ. Կարօ եւ Դալար Պետիկօղլուի եւ զաւակին՝
Կարէնի (Պոլիս),
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր, մեծօր եւ աներին,՝

ԱՐԱՅ ԷԼԱԿԵՕԶԻ

(ARA ELAGOZ)

Մահուան առաջին տարելիցին առիթով
Ինչպէս նաեւ՝

**ԷԼԱԿԵՕԶԵԱՆ, ՅԱԼԵՊԵԱՆ, ՍԱՐԱՑԵԱՆ,
ՕՅԱՆՃԱՆԵԱՆ, ԱՐՄԵՆԵԱՆ
ԵՆ ՊԵՏԻԿԵԱՆ**

Գերդաստաններու համայն ննջեցելոց հոգիներուն ի հանգիստ



Այրի Տիկ. Չարուհի Չինգիլեանի,
Տ. եւ Տիկ. Խաչիկ եւ Սիւզան Շահպազեանի եւ Դուստրին՝ Անիի,
Տ. եւ Տիկ. Պետրոս եւ Յռիփսիմէ Զօպանեանի եւ զաւակներուն՝
Արայի եւ Արմէնի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր եւ մեծ հօր՝

ՅԱԿՈՐ ՇԱՅՊԱԶԵԱՆԻ
(HAGOP SHAHBAZIAN)

Մահուան 40-ին առիթով



Պրն. Յովակիմ Սարըմանուկօղլուի եւ զաւակներուն,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ կնոջ, մօր եւ մեծ մօր՝

ՀԱՐՍՈՒՅԻ ՍԱՐԸՄԱՆՈՒԿՕՂՈՒԻ
(HARSUHI SARIMANUKOGLU)

Մահուան 40-ին առիթով





Սիրելի հաւատացեալներ,

Ձեր ուշադրութեան կը փափաքինք յանձնել թէ,

**Կիրակի, 10 Յունիս 2018-ին,
բացառաբար**

Ս. Պատարագը պիտի սկսկի առաւօտեան ժամը 11-ին:

Նկատի ունենալով Outremont-ի քաղաքապետարանի կազմակերպութեամբ տեղի ունենալիք մրցումներու հետեւանքով կարգ մը փակեալ պողոտաներու եւ փողոցներու իրավիճակը, որոնք փակուած պիտի ըլլան մինչեւ կէսօր ժամը 12:

Սիրելի հաւատացեալներ,


Ձեր ուշադրութեան կը յանձնենք նաեւ՝ թէ Lajoie փողոցը բաց պիտի ըլլայ, ուր հնարաւորութիւնը պիտի ունենաք կանգնեցնելու ձեր ինքնաշարժները:

Կցեալ կը գտնէք Outremont-ի քաղաքապետարանին կողմէ ուղարկուած փակեալ պողոտաներու կարգացուցակը, որ դարձեալ կը փափաքինք յանձնել ձեր ուշադրութեան կարելիութեան չափով դիւրացնելու ձեր երթելեկի միջոցը, նախատեսելով այս Կիրակի օրուան համար բացառաբար ստեղծուած պարագան:

Շնորհակալութիւն

Ծիսական Խորհուրդ

20 RUES FERMÉES LE DIMANCHE 10 JUIN





Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդարանիստ Եկեղեցւոյ 2018 Տարեշրջանի Տօնացոյց

Ամիս	Օր	Չեռնարկ
	17, Կիրակի	Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետի Մասունքները Գանատայի Մէջ Պատարագիչ եւ Քարոզիչ Արժ. Տ. Հրաչ Քինյ. Մուրատեան Պուկարահայոց Հոգեւոր Հովիւ
	22, Ուրբաթ	“Karaoke Night” «Կոմիտաս» Դպրաց -Դաս /Երգչախումբի Հիմնադրութեան 60-րդ Ամեակին Առիթով Երեկոյեան Ժամը 7-ին
Յուլիս	15, Կիրակի	«Պայծառակերպութիւն» Խաչալուայ Ջրօրհնէք Վարդավառ
	9, Երկուշաբթի	Յիշատակ Մեռելոց Հոգեհանգստեան Պաշտօն
Օգոստոս	12, Կիրակի	Տօն «Վերափոխումն Ս. Աստուածածնի» Խաղողօրհնէք Աւարտին Ճաշկերոյթ Եկեղեցւոյ շրջափակին մէջ
	13, Երկուշաբթի	Յիշատակ Մեռելոց Հոգեհանգստեան Պաշտօն
	17, Երկուշաբթի	Յիշատակ Մեռելոց Հոգեհանգստեան Պաշտօն

	21, Ուրբաթ	Հայաստանի Հանրապետության 25-րդ Տարեդարձ
Հոկտեմբեր	27, 28 Շաբաթ, Կիրակի	Տարեկան Պազար «Մարի Մանուկեան» սրահ
Նոյեմբեր	Թուականը յաջորդիւ	«Կոմիտաս» Դպրաց Դասի 60- րդ Տարեդարձ
Դեկտեմբեր	2, Կիրակի	Մանուկմերու Ս. Ծնունդ եւ Կաղանդի Տօնակատարութիւն «Մարի Մանուկեան» սրահ
	9, Կիրակի	Եկեղեցւոյ Գնման եւ Օծման 48-րդ Տարեդարձ Տօնական Ճաշկերոյթ «Մարի Մանուկեան» սրահ
	31, Երկուշաբթի	ՆՈՐ ՏԱՐԻ



Գրաւուած Օր

**«Կոմիտաս» Դպրաց Դաս Երգչախումբի
Յիմնադրութեան 60 Ամեակի**

Յանդիսութիւն

10 Նոյեմբեր 2018, Շաբաթ երեկոյեան

Կը խնդրուի չխաչաձեւել:

Մանրամասնութիւնները յաջորդիւ:

**Շնորհակալութիւն
Ծիական Խորհուրդ**



Յայտարարուժիւն

Միքելի հաւատացեալներ կը փափաքինք տեղեկացնել ձեզ թէ յետայսու Ծիական Խորհուրդի ժողովներուն իւրաքանչիւր ամսուայ առաջին Երեքշաբթի օրը, երեկոյեան ժամը 5-5:30, կէս ժամ տեւողութեամբ, Ծիական Խորհուրդը մեր հաւատացեալներուն պիտի յատկացնէ առիթը խորհրդակցական հանդիպում մը ունենալու Ծիական Խորհուրդին հետ:

Այն հաւատացեալները որոնք ունին Եկեղեցւոյ նկատմամբ հարցեր, մեկնաբանութիւններ կամ ենթադրութիւններ կրնան ներկայացնել այդ հանդիպման ընթացքին:

Ժամադրութեան համար հեռաձայնել

Եկեղեցւոյ քարտուղարութեան՝

(514) 279-3066

Շնորհակալութեամբ՝
Ծիական Խորհուրդ
Ս. Գր. Լուս. Առաջ. Մայր Եկեղեցւոյ



**Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Առաջնորդանիստ Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian
Cathedral**

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6-12 տարեկան երեխաներու համար

SUNDAY SCHOOL

For the ages of 6-12 years old children

Կիրակնօրեայ Վարժարանին նպատակն է Աստուծոյ խօսքն ու մեր Եկեղեցւոյ
աւանդոյթները մեր երեխաներուն մտքերուն եւ հոգիներուն մէջ սերմանել:

Երեխաները հաճելի եւ ընկերային մթնոլորտի մէջ կը սորվին Սաղմոսներ եւ
երգեր, կը զարգացնեն Հայերէն լեզուն եւ կը ծանօթանան Հայոց
Պատմութեան:

Չուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ
Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար հեռաձայնել՝
Եկեղեցւոյ գրասենեակ (514) 279-3066



**Sunday School aims to sow the word of God and
the traditions of our Armenian Church in our
children's minds and souls.**

**In a pleasant and friendly atmosphere, the
children will learn Psalms & songs, develop
Armenian language skills, & introduce to
Armenian history.**

Fun & fascinating consecutive Fieldtrips

**For more information and registration call to the
Church office (514) 279-3066**

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax:
(514) 279-8008

E-Mail: stgregorychurch@gmail.com, www.saintgregory.ca
Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Lancement du Groupe Jeunesse Musicale St-Grégoire d'Outremont



**Nous vous invitons à vous joindre à
notre nouvelle Chorale d'Enfants
« Jeunesse Musicale St-Grégoire
d'Outremont » (âge d'inscription 7 à 15
ans).**



**Les pratiques débuteront dimanche le 14
janvier 2018, à l'Église St-Grégoire l'Illuminateur, situé au 615
Av. Stuart à Outremont et auront lieu de 13h00 à 14h00. Elles se
poursuivront par la suite tous les dimanches selon ce même horaire.
Les cours seront donnés par le professeur Karen Manucharyan
diplômé du Conservatoire de Yerevan, en Arménie, qui assumera la
direction de cette chorale.**

**Les enfants auront l'opportunité d'apprendre les bases de la
notation musicale et le solfège
Le répertoire étudié consistera de pièces musicales contemporaines,
classiques et religieuses, de langue française et arménienne.**

**La participation est gratuite. Venez nombreux participer à cette
expérience enrichissante!**

**Pour des informations additionnelles,
svp vous adresser au
(514) 279-3066 ou à stgregorychurch@gmail.com**

Conseil paroissial



Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մանկական Երաժշտական Խումբ



Ձեզ կը հրաւիրենք միանալու մեր նոր մանկական երգչախումբին «Jeunesse Musicale St-Grégoire d'Outremont» - (գրանցման տարիք 7-15 տարեկան):



Փորձերը կը սկսին Կիրակի, 14 Յունուար 2018, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, կ.ե. ժամը 1:00 2:00 - հասցէ 615 Stuart Avenue Outremont-ի մէջ:

Փորձերը պիտի շարունակուին կատարուիլ ամէն Կիրակի, վերոյիշեալ նոյն ժամուին:

Դասընթացքները պիտի կատարէ Երեւանի երաժշտանոցէն շրջանաւարտ, Կարէն Մանուչարեան, որ կը ստանձնէ նաեւ՝ երգչախումբին ղեկավարութիւնը:

Փոքրերը հնարաւորութիւն պիտի ունենան սորվելու հիմնական երաժշտութեան նորաները, եւ միաժամանակ մշակելով անոնց երաժշտական գիտելիքներն ու ճաշակը:

Ուսումնասիրուած ծրագիրը պիտի բաղկանայ ժամանակակից, դասական եւ կրօնական երաժշտական կտորներէ, Ֆրանսերէն եւ Ղայերէն լեզուներով:

Մասնակցութիւնը անվճար է: Եկէ՛ք եւ օգտուեցէք այս պատեհ առիթէն:

Յաւելեալ տեղեկութիւններու համար հաճեցէք հեռաձայնել (514)279-3066 կամ stgregorychurch@gmail.com

Ծիական Խորհուրդ



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի



ԽՈԿՈՒՄ ԵՒ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

**ԽՈԿՄԱՆ, ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍՈՒՐԲ ԳՐՔԻ
ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆԸ**

Արդեն իսկ տեղի կ'ունենան ամեն

Յինգշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին

**Սոնթթալի Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ
Եկեղեցւոյ մէջ:**

**Կը հրաւիրենք մեր հաւատացեալները մասնակցելու այս
հոգեպարար արարողութեան եւ սերտողութեան, որուն ընթացքին
միասնաբար պիտի փորձենք ճանչնալ Սուրբ Գիրքը, Եկեղեցւոյ
հաւատքն ու առաքելութիւնը, մեր դերն ու մասնակցութիւնը
եկեղեցւոյ կեանքին մէջ եւ վերջապէս պատասխան գտնել մեզ
յուզող հարցումներուն ու մտահոգութիւններուն:**

Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին ներկայութիւնը:

Աղօթարար՝

Տ. Յայարի Զինյ. Թանաշեան

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/

stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ՍՈՒՐԲ ՅԱԿՈՒՄ ՄԾԲԵԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ՍԱՍՈՒՆԲԵՆԸ ԳԱՆԱՏԱՅԻ ՄԷՋ

SAINT JACOB OF MTSBIN
HOLY RELICS IN CANADA

DIVINE LITURGY

Celebrant and homilist
Rev. Fr. Hrach Muradyan
Parish Priest of St. George
Armenian Apostolic Church of Plovdiv
Bulgaria

ՀԱՆԴԻՍԱԲՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Պիտի պատարագէ եւ քարոյէ
Արժ. Տ. Հրաչ Բինյ. Մուրադեան
Պլովդիվի Հոգևոր Հովիւ (Պուլկարիա)

ՄՈՆՏՐԵԱԼ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Հայաստանեայց
Առաքելական
Առաջնորդանիստ եկեղեցի
Յունիս 17, ժամը 10:30-ին

ԹՈՐՈՆՏՕ

Ս. Երրորդութիւն Հայաստանեայց
Առաքելական եկեղեցի
Յունիս 24, ժամը 10:30-ին



MONTREAL
St. Gregory
the Illuminator
Armenian Cathedral
June 17,
at 10:30am

TORONTO
Holy Trinity Armenian
Apostolic Church of Toronto
June 24,
at 10:30am

ԳԱՆԱՏԱՀԱՅՈՅ ԹԵՄ

ARMENIAN DIOCESE
OF CANADA



DIOCÈSE ARMÉNIEN
DU CANADA

WWW.ARMENIANCHURCH.CA



KARAOKE Night ՔԱՐԱՌԻՔԷԻ ԳԻՇԵՐ



«ԿՈՄԻՏԱՍ»

Դպրաց Դաս / Երգչախումբի
Հիմնադրութեան՝
60-րդ Ամեակին Առիթով

Ուրբաթ, 22 Յունիս 2018

Երեկոյեան ժամը 7-ին
«Մարի Մանուկեան» սրահ

Friday – June 22, 2018

at 7:00 pm

“Marie Manoogian” Hall

- Երգեցողութիւն/Singing
- Կերուխում/
Pizza/Poutine/Soft Drinks

Հրաւիրուած են բոլոր
երիտասարդները

Don't Miss

Տեղերու ապահովման հեռաձայնել Եկեղեցւոյ
Գրասենեակ - For reservation please call to the Church
office at: (514)279-3066

\$20 Entry

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax:
(514) 279-8008 / stgregorychurch@gmail.com



Մոնթրեալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ
Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal
ԵԼ / And
Լաւալի Ս. Խաչ Յայաստանեայց Առաքելական Եկեղեցի
Holy Cross Armenian Church of Laval

ՎԱՐԴԱՎԱՌ / VARTAVAR

Քրիստոսի Այլակերպութեան Տօնին Առիթով
Transfiguration of our Lord Jesus Christ

Ուխտագնացութիւն Դեպի Ռիգօ
Pilgrimage to Rigaud

Կիրակի, 15 Յուլիս / Sunday, July 15, 2018

Սկիզբ Ս. Պատարագի / Holy Mass –
Կէսօրին ժամը / at - 12:00 noon



• Օթօպիւսի մեկնումի վայրեր.-

Մոնթրեալ – Normandie Shopping Center (Rue Salaberry)

Լաւալ – Ս. Խաչ Յայց. Առաք. Եկեղեցի

(St. Martin O.) առաւօտեան ժամը 10:00-ին

Սակ - \$25 (Օթօպիւս եւ ճաշ)

- Անձնական Միջոց – \$15 (ճաշ)

Սակ Փոքրերու - \$15 (Օթօպիւս եւ ճաշ) -

- Անձնական Միջոց Փոքրերու Սակ - \$10 (ճաշ)

• Bus Transportation:

Montreal – Normandie Shopping Center (Rue Salaberry)

Laval – Holy Cross Armenian Church (St. Martin O.)

at 10:00 am

Fee – Adult - \$25 (Bus & Lunch)

- Personal Transportation Adult - \$15 (Lunch)

Fee - Child - \$15 (Bus & Lunch)

- Personal Transportation Child - \$10 (Lunch)

Տեղերու ապահովութիւնն ու արձանագրութիւնը
անհրաժեշտ է բոլորին Օթօպիւս եւ անձնական միջոց, կը
խնդրենք հեռաձայնել եկեղեցիներու քարտուղարութեան
մինչեւ 9 Յուլիս 2018 /

Reservation & registration required for Bus and Personal
Transportation Users, please call the Church office until July 9th, 2018 at:

Մոնթրեալ / Montreal – (514) 279-3066


Լաւալ / Laval – (450) 687-5355

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՐԻ

Միքելի Հասարացեալներ, Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզ, որ յետայսու, ամէն Կիրակի, Ձեր ինքնաշարժները կրնաք կանգնեցնել Bernard փողոցին վրայ գտնուող Ecole Outremont-ի parking-ին մէջ, սկսեալ առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ կ.ե. ժամը 3:00:

CAR'S PARKING

Dear Parishioners, We would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the Ecole Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm.



- From our Church turn right on Bernard street, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. Go all the way to the "centre d'éducation". The parking space is on your right.